ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2026-1-7-Ա

ք. Երևան 12.03.2026թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2026 թվականի մարտի 12-ի նիստում քննարկեց 2025 թվականի հուլիսի 11-ին արտոնագրային հավատարմատար Արթուր Վարդերեսյանի կողմից ներկայացված «Գասպար բեսթ» ՍՊԸ ընկերության (Երևան, Կիևյան 2Ա 6, AM) «COFFEE STUDIO BY DEGUSTO» (No20241772) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 93-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար և, որոնք համընդհանուր են դարձել խոսակցական կամ առևտրային պրակտիկայում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ նիշի գերիշխող տեղը զբաղեցնում է նկարագրական բնույթի գրառումը, որն առևտրում ծառայում է ծառայության տեսակը նշելու համար, այն է՝ նիշում առկա «COFFEE STUDIO» գրառումը, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «Սուրճի ստուդիա», հանդիսանում է նկարագրական բնույթի նշում հայտարկված ծառայությունների համար և համընդհանուր օգտագործվում է առևտրային պրակտիկայում՝ որպես ծառայությունների մատուցման վայրը նշող գրառում (տես՝ https://www.google.com/search?q=COFFEE+STUDIO%3F&sca_esv=, https://www.facebook.com/search/pages/?q=COFFEE%20STUDIO&sde=, https://www.tripadvisor.com/Restaurant_Reviewg295387-d12704216-Reviews-Coffee_Studio-

Sevastopol.html, https://www.thecoffeestudioldn.com/, https://www.thecoffee.studio/, https://www.facebook.com/amcoffeestudio?locale=hy_AM, https://amcoffeestudio.com/am-coffee-studioo, https://www.instagram.com/coffeestudio.official/, https://www.coffeestudio.co.nz/, https://www.facebook.com/coffeestudiocafe, https://www.instagram.com/setacoffee.studio/?hl=en, https://www.thecoffeestudioldn.com/, https://www.musecoffeestudio.com/, https://www.instagram.com/thecoffeestudio/): Կարգի 102-րդ, 104-րդ կետերի համաձայն եթե չպահպանվող տարրը տարածական առումով ավելի մեծ տեղ է զբաղեցնում ապրանքային նշանի ընդհանուր պատկերի մեջ («ստվերում է» մնացած տարրերը) կամ ապրանքային նշանի բոլոր տարրերով արտահայտված հավաքական իմաստը տվյալ տարրի իմաստից բացի այլ իմաստ չի արտահայտում, այսինքն՝ սպառողին այլ իմաստ, միտք չի հաղորդում, քան հաղորդում է տվյալ ոչ պահպանունակ տարրը և այդ պատճառով սպառողի մեջ այլ պատկերացում (ասոցիացիա) չի առաջանում, ապա համարվում է, որ տվյալ չպահպանվող տարրն ապրանքային նշանի գերիշխող մաս է կազմում: Եթե չպահպանվող տարրը կազմում է ապրանքային նշանի գերիշխող մասը, ապա եզրակացություն է արվում տվյալ նշանը որպես ապրանքային նշան գրանցելու անհնարինության մասին և որոշում է ընդունվում նշանի գրանցումը մերժելու վերաբերյալ: Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն բացառիկ իրավունքը չի տարածվում ապրանքային նշանի այն տարրերի վրա, որոնք չեն կարող գրանցվել որպես ապրանքային նշան, դրանք բարեխիղճ օգտագործելու և երրորդ անձանց օրինական շահերը չխախտելու պայմանով:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում, ԱԾՄԴ-ի 43-րդ դասի ծառայությունների համար, հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցման հիման վրա պահպանվող՝ «Gusto» («Ինտաս» ՍՊԸ, Երևան, Կիևյան 1-ին նրբ., 3-րդ շենք, բն. 12 (AM), N-16166, 18.11.2010թ.) համակցված ապրանքային նշանին: Կարգի 130.1-րդ կետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման կարող են համարվել համակցված ապրանքային նշանները: Տվյալ դեպքում ավելի վաղ գրանցված՝ «Gusto» ապրանքային նշանը ներառված է հայտարկված՝ «COFFEE STUDIO BY DEGUSTO» նիշի մեջ և կարող է ընկալվել նույն կերպ, առաջացնելով՝ նույն բառի ընկալման զգացողություն:

Ինչպես նաև, Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և Կարգի 111-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործվող «Gusto» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկատվությունն առկա է https://www.gusto.lorange.am/contact.html, https://www.facebook.com/GustoYerevan, https://www.instagram.com/gusto.yerevan/, https://www.tripadvisor.com/Restaurant_Review-g293932-d1100877-Reviws-Gusto-Yerevan.html, https://menu.am/en/restaurants/gusto, https://visityerevan.am/restaurants/details/63/en/, https://glovoapp.com/am/hy/yerevan/gusto-yrv/, https://move2armenia.am/en/restaurants/gusto/ ինտերնետային կայքերում և, որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար և, որոնք համընդհանուր են դարձել խոսակցական կամ առևտրային պրակտիկայում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ նիշի գերիշխող տեղը զբաղեցնում է նկարագրական բնույթի գրառումը, որն առևտրում ծառայում է ծառայության տեսակը նշելու համար, այն է՝ նիշում առկա «COFFEE STUDIO» գրառումը, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «Սուրճի ստուդիա», հանդիսանում է նկարագրական բնույթի նշում հայտարկված ծառայությունների համար և համընդհանուր օգտագործվում է առևտրային պրակտիկայում՝ որպես ծառայությունների մատուցման վայրը նշող գրառում:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում, ԱԾՄԴ-ի 43-րդ դասի ծառայությունների համար, հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցման հիման վրա պահպանվող՝ «Gusto» («Ինտաս» ՍՊԸ, Երևան, Կիևյան 1-ին նրբ., 3-րդ շենք, բն. 12 (ԱՄ), N-16166, 18.11.2010թ.) համակցված ապրանքային նշանին:

Ինչպես նաև, Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և Կարգի 111-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործվող «Gusto» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկատվությունն առկա է https://www.gusto.lorange.am/contact.html, https://www.facebook.com/GustoYerevan, https://www.instagram.com/gusto.yerevan/, https://www.tripadvisor.com/Restaurant_Review-g293932-d1100877-Reviws-Gusto-Yerevan.html, https://menu.am/en/restaurants/gusto, https://visityerevan.am/restaurants/details/63/en/, https://glovoapp.com/am/hy/yerevan/gusto-yrv/, https://move2armenia.am/en/restaurants/gusto/ ինտերնետային կայքերում և, որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կրկնական փորձաքննության արդյունքում կայացված որոշումը իրավաչափ է:

Բողոքարկողի ներկայացուցիչը կարծում էր, որ հայտարկված ապրանքային նշանը ենթակա է գրանցման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման

խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Արթուր Վարդերեսյանի կողմից ներկայացված «Գասպար բեսթ» ՍՊԸ ընկերության «COFFEE STUDIO BY DEGUSTO» (No20241772) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ